Հաստատում եմ՝

ԵՊԼՀ-ի ռեկտոր՝

_____ Ս.Զոլյան

«06» _____12_____ 2011թ.

ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի

ՊԱՏՎՈ ՎԱՐՔԱԿԱՆՈՆ

Ընդհանուր դրույթներ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը (այսուհետ նաև՝ ԵՊԼՀ) ընդունում է սույն Պատվո վարքականոնը՝ առաջնորդվելով ՀՀ օրենսդրությամբ և գիտակցելով իր առաքելությունը բարձրագույն կրթության իրականացման, հետագա կայացման և զարգացման գործում: Պատվո վարքականոնով ամրագրված դրույթները պարտադիր են ԵՊԼՀ-ի յուրաքանչյուր դասախոսի համար:

ԵՊԼՀ-ում դասախոս կարող է դառնալ ցանկացած անձ, որն ընդունում է համալսարանի առաքելությունն ու նպատակները, դրանց իրականացման համար կրում է պատասխանատվություն և համապատասխանում է ԵՊԼՀ-ի ընթացակարգերով սահմանված պահանջներին: Աշխատանքի ընդունման հիմք են հանդիսանում մասնագիտական որակավորումները, ունակությունները և հմտությունները:

ԵՊԼՀ-ի դասախոսները համալսարանական հանրության լիիրավ անդամներ են, ունեն դրանից բխող իրավունքներ և ստանձնում են համապատասխան պարտականություններ:

Դասախոսի առաքելությունը

Դասախոսը պատասխանատու է ուսումնակրթական գործընթացի բնականոն իրականացման համար. այն է՝ ուսանողի մասնագիտական կրթության, գործնական իրազեկությունների, աշխարհայացքի կայացման և ընդհանուր զարգացվածության ապահովման համար:

Դասախոսը պարտավոր է մշտապես կատարելագործել իր տեսական գիտելիքները և գործնական հմտությունները, ծավալել գիտահետազոտական գործունեություն և ընդլայնել ուսումնամեթոդական իրազեկությունների պաշարը:

Դասախոսը պարտավոր է դրսևորել կիրթ, բարոյական նորմերին համապասխանող վարքագիծ, լայնախոհ մտածողություն և առողջ ապրելակերպ: Դասախոսն անձնական օրինակով ցույց է տալիս ուսանողներին աշխատանքային և ուսումնական կարգապահության կանոնները պահպանելու անհրաժեշտությունը, աշխատակիցների հանդեպ ցուցաբերում է հարգալից վերաբերմունք, պահանջկոտ է սեփական անձի, իր խոսքերի և արարքների նկատմամբ, բացահայտորեն ընդունում է իր սխալները և բարեխղճորեն ուղղում դրանք:

Դասախոսը արդար և անկողմնակալ է, կարգապահ՝ իր աշխատանքային հարաբերություններում և ծառայողական պարտականությունների կատարման գործում: Նա պատասխանատու է իր արարքների և խոսքերի համար, բարձր է պահում ԵՊԼՀ-ի պատիվն ու արժանապատվությունը:

Դասախոսը իր աշխատանքային գործունեության ընթացքում բացառում է ակադեմիական անազնվության բոլոր դրսևորումները և ջանում է կանխարգելել դրանք ԵՊԼՀ-ի միջավայրում: Դասախոսը պարտավոր է անաչառ լինել ուսանողների ակադեմիական առաջադիմության ստուգման և գնահատման հարցերում՝ բացառելով ցանկացած տեսակի կողմնակի միջամտություն, կանխարգելելով կոռուպցիոն բոլոր հնարավոր վտանգները:

Եզրափակիչ դրույթներ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի Պատվո վարքականոնը բարոյական նորմերը, պարտավորությունները և բարեխիղճ վարքագիծը կարգավորող հիմնական փաստաթուղթն է:

ԵՊԼՀ–ն իրավասու է վերահսկել դասախոսի Պատվո վարքականոնում տեղ գտած սկզբունքների իրականացումը՝ նպատակ ունենալով պահպանելու և ամրապնդելու ԵՊԼՀ-ի՝ որպես ՀՀ կրթական համակարգի անբաժանելի մասի բարի համբավը և անունը:

Պատվո վարքականոնը հավելվածի տեսքով կցվում է ԵՊԼՀ դասախոսի պայմանգրին պարտադիր ծանուցման համար:

Հաստատված է՝ 25.11.2011թ. N3 գիտական խորհրդի նիստին: